1918 Թ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթ ու կարևոր խնդիրներից մեկը անմիջական հարևանների հետ հարաբերությունների կարգավորումն էր, որի լուծումը հանդիպեց լուրջ դժվարությունների, քանի որ բախվում էին նրանց շահերը: Անդրկովկասի նորաստեղծ հանրապետություններից յուրաքանչյուրը ձգտում էր լուծել իր տարածքային ու սահմանային հարցերը, ընդ որում՝ հարևանների հաշվին, դա էլ առաջ բերեց նրանց միջև պայքար, որը վերածվեց զինված ընդհարումների: Այդ պայքարին միջամտում էին Անգլիան ու Ռուսաստանը: Անգլիան պայքար ծավալվեց Հայաստանի ու Վրաստանի միջև: Վերջինիս աջակցում էր Անգլիան, իսկ Հայաստանի կողմում հանդես էր գալիս Կամավորական բանակը, որն ուներ իր հեռու գնացող նպատակները: Նկատենք, որ այդ ժամանակ, կապված թուրքական 1918թ. արշավանքի և, հատկապես, Անդրկովկասյան հանրապետության վերջին օրերի իրադարձությունների հետ, հայ քաղաքական շրջանները ոչ առանց հիմքի վրացական կողմին մեղադրում էին հայերի հաշվին վրացական շահերը պաշտպանելու, հայերի թիկունքում գործելու և թշնամու դեմ նրանց միայնակ թողնելու մեջ: Ի դեպ, այդ վարմունքը հատուկ է վրացական կողմին, որը հաճախ է կրկնվել հայ-վրացական բազմադարյան հարաբերությունների ընթացքում: Այս անգամ դրան ավելացավ նաև վրացիների ձգտումը՝ նվաճել հայկական տարածքներ: Ընդ որում, օգտվելով իր աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքից՝ Վրաստանի ղեկավարությունը փորձում էր Հայաստանի հաղորդակցության ուղիների շրջափակման միջոցով նաև տարածքային զիջումներ պարտադրել: Ուժի դիրքից վարած նման քաղաքականությունը հատկապես կիրառվեց Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ Վրաստանը դեռևս օգտվում էր գերմանական հովանավորությունից: «Սովի և համաճարակի ճիրաններում գալարվող Հայաստանի համար, որը կտրված էր արտաքին աշխարհից, դա թիկունքից հասցված դաշույնի հարված էր»[1]: Նման պայմաններում երկու երկրների միջև ծագած տարածքային վեճը չհարթվեց խաղաղ ձևով և վերածվեց ռազմական ընդհարման: 1918թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց հայ-վրացական պատերազմը: Անգլիացիներն անմիջապես հանդես եկան Վրաստանի կողմում:

[1] Հայոց պատմություն, Երևան, 2000, էջ 373:

Գեներալ Ջ.Ուոքերը Հայաստանի արտաքին գործերի նախարարին հայտնում է, որ «հայ-վրացական պատերազմը հայերը սկսել են Կամավորական բանակի հետ դաշնակցած և նպատակ են ունեցել վերացնել Վրաստանի անկախությունը: Նա նաև նշել է, որ «...չի թույլատրի Վրաստանի դեմ դուրս գալ»[2]: Իսկ գեներալ Վ.Թոմսոնը հունվարի սկզբին Բաքվում Մ.Պապաջանովի հետ հանդիպման ժամանակ վրդովված ասել էր, որ «հայերն առաջինը սկսեցին պատերազմը, որին նախօրոք պատրաստվել էին և վրացիներին անակնկալի բերեցին»[3]: Չանդրադառնալով հայ-վրացական պատերազմի մանրամասներին*, նշենք միայն, որ այդ կարճատև պատերազմը երկու դարավոր հարևանների դժբախտությունն էր, որ պարտադրեց Վրաստանը: Հայաստանը ստիպված էր զենքի դիմելու՝ պաշտպանելու իր երկիրը վրացիների հակահայկական գործողություններից: Հայաստանի «...վրայ,- գրում է Հովի. Քաջազնունին,- ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրեն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր նեղ սահմաններում նոյն իսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար - այդ հացն էր հանդիպում՝ Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը: Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ. այս էր պատերազմի հիմնական պատճառը»[4]: Գեներալ Ա.Դենիկինը, անդրադառնալով հայ-վրացական պատերազմին, գրում է, որ պատերազմի ժամանակ անգլիացիները 2-րդ անգամ վերջնագրով պահանջեցին մինչև դեկտեմբերի 19-ի կեսգիշերին դադարեցնել ռազմական գործողությունները: Այդ օրը կռվող կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր առավել բարենպաստ ռազմավարական իրավիճակ ստեղծել իր համար, և ծանր մարտեր մղեցին[5]: Կեսգիշերի մոտ «...հաջողությունը ակնհայտորեն հայերի կողմն էր,- գրում է Ա.Դենիկինը: - Պատերազմող կողմերին թելադրված պայմանները հայերի հանդեպ ծանր էին և անարդարացի: Նրանց (հայկական.- Գ.Պ.) զորքերը ետ էին քաշվում իրենց սկզբնական դիրքերը, այնինչ վրացիները մնում էին իրենց դիրքերում: Բորչալուի գավառում պետք է ձևավորվեր հայ-վրացական խառը վարչակազմ,

---

[2] ԳԱ ՊՓ, ֆ.446, օп.1, д.9, л.44-45, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.39-40:

* Մանրամասն տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Մելքոնյան Ա., Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Վիրաբյան Վ., 1918թ. հայ-վրացական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները:

[3] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.193, մաս I, թ.75-76:

[4] Քաջազնունի Հովհ., ՀՅ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 34:

[5] Տե՛ս Деникин А., Очерки русской смуты: В.3 книгах.- Книга 3/Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, М., 2003, с.221:

իսկ համարյա ամբողջովին հայաբնակ Ախալքալաքի գավառը պետք է հանձնվեր Վրաստանին, որը նրանք պետք է դեկավարեին անգլիացիների վերահսկողությամբ: Ասես դիտմամբ ստեղծվում էին թշնամության և դժգոհության օջախներ»[6]: Գնդապետ Մ.Զինկևիչը գրում է. «Երեք շաբաթ տևած պատերազմը թեև ավարտվեց Հայաստանի ռազմական հաղթանակով՝ տարածքային ձեռքբերումներով, բազմաթիվ գերիներով և ռազմավարով, սակայն ի վերջո այն վերածվեց դիվանագիտական պարտության»[7]: Հայ-վրացական խորհրդաժողովում (հունվարի 9-ից 17-ը[8]) բրիտանական զորական առքելության դիվանագիտական ճնշմամբ[9] որոշվեց Բորչալուի գավառի տարածքը հայտարարել «չեզոք գոտի»: Լոռին բաժանվում էր երեք մասի: Հյուսիսային մասը տրվում էր Վրաստանին, հարավայինը՝ Հայաստանին, իսկ միջին մասում հաստատվում էր խառը կառավարում: Ախալքալաքի շրջանը հայերը պետք է վերադարձնեին վրացիներին[10]: Հայ-վրացական հիմնահարցը լուծվեց ի օգուտ Վրաստանի: Մ.Արզումանովը 1919թ. մարտի 22-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ «...նրանք (անգլիացիները.- Գ.Պ.) բացեիբաց ինձ ասում էին, որ եթե հայ-վրացական խորհրդաժողովի ժամանակ աջակցում էին վրացիներին, ապա միայն այն պատճառով, որ համոզված էին, որ հայերը գործում են գեներալ Ա.Դենիկինի հրամանով»[11]: Անգլիացիները կրկին քողարկում էին իրենց դիրքորոշման իրական դրդապատճառները, թե իբր հայերը գործում են գեներալ Ա.Դենիկինի հրամանով: Մի հանգամանք, որ ամենևին չէր համապատասխանում իրականությանը: Պարզապես վրացիներն անգլիացիների համար վստահելի տարր էին Անդրկովկասում, ունեին խիստ հակառուսական ու հակահայկական դիրքորոշում: Օգտագործելով առիթը՝ անգլիացիները մեկ անգամ ևս հարվածում էին հայերի ռուսամետությանը՝ ձգտելով խափանել այն: Չնայած Ռուսաստանի հետ Հայաստանի անգամ դիվանագիտական հարաբերությունները չէին կարգավորվում, գեներալ Ջ.Ուոքերը Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս.Տիգրանյանին «...բացահայտ սպառնում էր,- գրում է գեներալ Ա.Դենիկինը,- որ եթե հայերը Կամավորական բանակի հետ միասին հարձակվեն Վրաստանի

---

[6] Деникин А., Очерки русской смуты: В.3 книгах.- Книга 3/Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, с.221-222.
[7] ГА РФ, ф.446, оп.1, д.9, и.43, ՀԱԱ, ֆ.Պ-277, g.1, գ.5, թ.38.
[8] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 (Քաղաքական պատմություն) Փաստաթղթեր և նյութերի ժողովածու, էջ 82-83:
[9] ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.75, թ.20:
[10] Տե՛ս ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.34, ՀԱԱ, ֆ.Պ-277, g.1, գ.5, թ.29:
[11] ՀԱԱ, ֆ.Կ-4033, g.2, գ.963, թ.85:

վրա, ապա նա իր զորքերի հետ միասին կպաշտպանի նրան»[12]: Հայկական կողմից պահանջվում էր անմիջապես հակահարված տալ անգլիացիների այդ ստահոդ պնդումներին և ցույց տալ, որ հայերը չեն միացել գեներալ Ա.Դենիկինին՝ վրացիների դեմ պայքարում:

Հայաստանի կառավարությունը այդ կապակցությամբ 1919թ. հունվարին տվեց հետևյալ բացատրությունը, «*Ի՞նչ է և ի՞նչ պետք է ըլլայ Հայաստանի վերաբերումը դէպի Ռուսաստանը. դէպի այն Ռուսաստանը, որ Տենիքինի միջոցով կը կազմակերպուի հարաւի մէջ և որ կը ձգտի վերականգնել Ռուսաց նախկին միութիւնը, հաւանօրէն նաև նախկին միապետութիւնը:*

Մեր հակառակորդները և տարաբախտաբար նաեւ մեր դաշնակիցներէն ոմանք այնպէս կը կարծեն, թէ հայ ժողովուրդը տակաւին կապուած է Ռուսաստանի այդ վերականգնումի գործին եւ որ մինչեւ իսկ համաձայնութիւն .ունի Տենիքինի հետ: Արդ, բացարձակապէս անտեղի է այդ կարծիքը եւ հինուած է ոչ թէ որ եւ է փաստի կամ իրողութեան վրայ, այլ զրպարտութեան ու թշնամութեան վրայ:

...Հայ ժողովուրդը նախանձախնդիր է իր ազատութեան եւ անկախութեան եւ ոչ մէկ կերպ կրնայ զոհել իր անկախութիւնը հիւսիսէն եկող միապետական ժեներալին:

Մեր հակառակորդները եւ ...նաև մէր դաշնակիցներէն ոմանք այնպէս կը կարծէին անհիմնօրէն, թէ հայ ժողովուրդը կամ Հայաստանի կառավարութիւնը ցանկացող է Տենիքինի առաջխաղացութեան եւ թէ իբր ան նախանձախնդիր չէ իր անկախութեան»[13] (ընդգծումը մերն է.- Գ.Պ.):

Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերություններում Հայաստանի կառավարությունը կրկին դրսևորեց խիստ զգուշավորություն, որն առավելապես արտահայտվեց հայ-վրացական պատերազմի ընթացքում: Գնդապետ Մ.Զինկևիչը 1918թ. դեկտեմբերին Կամավորական բանակի ռազմածովային բաժնի պետին ուղղված գաղտնի զեկուցագրում տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարությունը ծայրահեղ զգուշություն է ցուցաբերում Կամավորական բանակին վերաբերող հարցերում: Նա չի համարձակվում իր ներկայացուցիչն ուղարկել Եկատերինոդար. վախենում է հեղինակազրկվել դաշնակիցների աչքում այն դեպքում, երբ Հայաստանի հովանավորության հարցը լուծված կլինի կամ հնարավոր կլինի լուծել և «...դրանով էլ բացատրվում է Կամավորական բանակում ներկայացուցիչ

---

[12] ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.53, "Вопросы истории", 1994, N1, с. 136, Деникин А., Очерки русской смуты: В.3 книгах.- Книга 3/Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, с.222:

[13] «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 1919, 16 հոկտ., էջ 481-482:

ունենալու վախը»[14]: Գեներալ Ա.Դենիկինը 1918թ. դեկտեմբերի սկզբին հաղորդեց Հայաստանի կառավարությանը, որ ցանկանում է Հ.Ջավրիևին* Եկատերինոդարում տեսնել Հայաստանի ներկայացուցիչ[15] : Իսկ Հայաստանի կառավարությունը չէր շտապում իր ներկայացուցչին գործուղել Եկատերինոդար, որպեսզի խուսափեր Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ բացահայտ քաղաքական շփումներից: Դա առավելապես անհրաժեշտ էր հայ-վրացական հակամարտության ընթացքում, երբ Հայաստանի Հանրապետության և Կամավորական բանակի միջև երևան եկան հակասություններ: Բանը նրանում է, որ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ղեկավարությունը հայ-վրացական ընդհարման հետ կապված իր պլաններն ուներ, որոնք հանդիպեցին Հայաստանի իշխանությունների դիմադրությանը: Գեներալ Ա.Դենիկինը ձգտում էր Վրաստանը գրավել, որին դեմ էին հայերը: Իր պլանն իրագործելու համար նա աշխատում էր կասեցնել անգլիացիների մուտքը Անդրկովկաս՝ այդ հարցում ակնկալելով հայերի աջակցությունը:

Թիֆլիսում դեկտեմբերի 19-ին Կովկասում Կամավորական բանակի անլեգալ ներկայացուցիչ գեներալ Տետրուևը Ռուսաստանի հարավ մեկնող հայկական պատվիրակության ղեկավար Մ.Արզումանովին հաղորդել էր, որ «Հատուկ խորհրդակցությունը» որոշել է թույլ չտալ անգլիական զինվորների մուտքը Անդրկովկաս. «...ուստի որոշված է պայթեցնել Սուրամի թունելը, որը միացնում է Սև ծովը Անդրկովկասի հետ: Ի նկատի ունենալով, որ հայերը Կովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցն են՝ կօգնեն իրականացնելու Կամավորական բանակի որոշումը, ինչով և կհաջողվի ջախջախել Վրաստանը և ...կկարողանանք ազատ շարժվել Վլադիկավկազի վրայով Թիֆլիս, որը երկու-երեք շաբաթից կգրավեն գեներալ Դենիկինի զորքերի կողմից: Նա խնդրեց ինձ, որ ես երաշխավորեմ 5-6 երիտասարդ, որ անհրաժեշտության դեպքում կարող են զոհել իրենց կյանքը: Այդ ժամանակ արդեն ժամանում էին անգլիական զինվորներ, սակայն փոքր խմբերով»[16] : Այնուհետև շարունակում է Մ.Արզումանովը՝ այդ ցնցող նորության մասին որոշեցի ոչ միայն զեկուցել Ա.Ահարոնյանին, այլ նաև տեղի հայ կուսակցական պատասխանատու ընկերներին, որոնք միակարծիք հայտնեցին, որ «ցանկացած գնով պետք է խանգարել նրանց պլանը: ...Դեկտեմբերի 21-ին պատասխանատվություն զգալով հայրենիքիս հանդեպ և չկասկածելով, որ եթե Կամավորական բանակի պլանն

---

[14] ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.38, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.33, Деникин А., Очерки русской смуты: В.3 книгах.- Книга 3/Т. 4, Т.5. Вооруженные силы Юга России, с.252.
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.96, թ.43:
[16] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց.2, գ.963, թ.81:

իրագործվի, ապա մեր ժողովուրդը կարող է ընկնել անելանելի ու տագնապալի վիճակի մեջ, շուրջ բոլորը շրջապատված թշնամիներով, իսկ գեներալ Դենիկինը կարող է ուշանալ Վլադիկավկազի գրավումով (ինչը և պատահեց) ...և որոշեցի այդ ամենի մասին իրազեկել Ն.Ժորդանիային ...զգուշացնելով, որ Հայաստանի կառավարությունը այդ ամենին բացարձակապես անտեղյակ է...»[17]: Հայաստանի իշխանությունների համար յուրահատուկ բարդ վիճակ էր ստեղծվել: Նրանք պետք է համոզեին թե՛ անգլիացիներին և թե՛ հարևան վրացիներին, որ կապ չունեն Կամավորական բանակի հետ: Մյուս կողմից պետք է աչալուրջ լինեին, որ Կամավորական բանակն իրենց անակնկալների առջև չկանգնեցներ, չհամաձայնեցված գործողություններ չծավալեր: Այսպես, օրինակ, առանց Հայաստանի իշխանությունների համաձայնության, փոխգնդապետ Վլասևը* ինքնագլուխ քայլեր էր ձեռնարկել: Նա Ռոստովում և Եկատերինոդարում հայտարարել էր ընդհանուր զորահավաք[18] ստանալով տեղի հայ համայնքների աջակցությունը և Կամավորական բանակի հետ համաձայնության գալով հավաքագրված մարդկանցից կազմել էր զինված ջոկատներ Բաթումով Հայաստան տեղափոխելու համար[19]: Սակայն ժամանակին այն կանխվեց Հայաստանի կառավարության կողմից: Հայաստանը օգնության այդ կարիքը չուներ, և դա կարող է միայն ավելի բարդացնել Վրաստանի հետ հարաբերությունները[20]: Ավելին, փոխգնդապետ Վլասևը 1919թ. հունվարի 5-ին Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմաքաղաքական բաժնի պետին ուղղված հուշագրում առաջարկել էր իր օգնությունը. «...Անմիջապես զբաղեցնել Սոչին և Սուխումի ուղղությամբ ճնշում բանացնել վրացիների վրա»[21]: Թիֆլիսում՝ 1919թ. «հունվարի 20-21-ին,- գրում է Մ.Արզումանովը,- ձեռքս ընկնում է (ինչ ճանապարհով, չեմ կարող նշել) գնդապետ Վլասևի գաղտնի զեկուցագիրը* ...և ես մտածեցի, որ անգլիացիները հիրավի իրավունք ունեն մեզ չհավատալ, քանի որ այդ փաստաթղթի պատճեն ...հանձնված էր անգլիական հրամանատարությանը»[22]:

---

[17] ՀԱԱ, ֆ.Կ-4033, g.2, գ.963, թ.82:

* Այդ օրերին Հայաստանի կառավարությունը ոչ միայն չէր շտապում իր ներկայացուցիչը գործուղել Եկատերինոդար, այլ նաև հրաժարվեց փոգգնդապետ Վլասևից՝ հայտարարելով, որ նա ոչ թե ներկայացուցիչ է, այլ զինվորական նախարար՝ գեներալ Հովի. Հախվերդովի գործակալը:

[18] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.158, թ.70:

[19] Տե՛ս ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.3:

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.158, թ.70:

[21] ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.5.

* Վլասևը հունվարի 5-ի նամակի կրկնօրինակը հունվարի 12-ին ուղղել էր նաև զինվորական նախարար, գեներալ Հ.Հախվերդովին, Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.158, թ.70-71:

[22] ՀԱԱ, ֆ.Կ-4033, g.2, գ.963, թ.85:

Անգլիացիների ձեռքն էին ընկել նաև Մ.Զինկևիչի, Լեսլիի, Վլասևի, Երևանում Ռուսական ազգային խորհրդի և գաղտնի ռուսական հետախուզական խմբի և այլ պաշտոնական և ոչ պաշտոնական անձանց նամակագրությունները և զեկուցագրերը ուղղված Կամավորական բանակին: Ինչպես նշել ենք, հայ-վրացական պատերազմը անխուսափելի էր, իսկ Կամավորական բանակը փորձեց օգտագործել այդ առիթը: Հայաստանում որոշակի ակտիվություն դրսևորեցին հայկական բանակում ծառայող ռուս սպաներն ու զինվորները, Երևանում Ռուսական ազգային խորհուրդը և գաղտնի գործող ռուսական հետախուզական խումբը, որոնք գաղտնի կապերի մեջ էին Կամավորական բանակի հետ և պահանջում էին օգտագործել ընձեռած հարմար պահը Կովկասը նվաճելու համար: Գնդապետ Մ.Զինկևիչը նույն զեկուցագրում հայտնում է, որ հայ-վրացական պատերազմը հարմար առիթ է «...Կամավորական բանակը Կովկասում հայտնվելու համար»[23]: Երևանում անգամ Ռուսական ազգային խորհուրդը (նախագահ՝ Մ.Ֆիլատև) գույքի պահպանման պատրվակով փորձեց ձևավորել 3-րդ ռուսական գունդը, որի համար հավաքագրել էր զգալի թվով սպաներ, սակայն հաջողություն չունեցան, և այն ցրվեց[24]: Ինչու՞ Կամավորական բանակին չհաջողվեց իրագործել իր ռազմավարությունը՝ նվաճել Վրաստանը և ամբողջ Անդրկովկասը: Դա գլխավորապես բացատրվում է երկու հանգամանքով, նախ՝ անգլիացիների առկայությունը տարածաշրջանում և նրա հովանավորությունը Վրաստանի նկատմամբ: Բացի դրանից՝ Հայաստանի իշխանությունները դեմ էին Կամավորական բանակի ռազմավարությանը և աշխատում էին ձախողել դրա իրագործումը:

Կամավորական բանակը իր դժգոհությունը արտահայտեց Հայաստանի կառավարությունից, որ նա, վարելով խիստ զգուշավոր քաղաքականություն, հայ-վրացական պատերազմի ընթացքում չհամագործակցեց, չօժանդակեց «Հատուկ խորհրդակցությանը»[25]: Գնդապետ Մ.Զինկևիչը 1919թ. հունվարին «Հայ-ռուսական հարաբերությունները» զեկուցման մեջ նշում է. «...շատ ցավալի է, որ ռուսները այդպիսի բուռն մասնակցություն են ունենում հայ-վրացական հակամարտությանը: *Ռուսները այս միջադեպում օգնեցին հայերին, սակայն նրանք Ռուսաստանին ծառայություն չեն մատուցում: Քաղաքականության մեջ ամաչելու կարիք չկա և երբ շահը պահանջում է, ապա պետք է չարակամորեն վերաբերվել մեր հանդեպ մեղավոր ազգին*»[26] (ընդգծումը մերն է.- Գ.Պ.): Ինչ նկատի ուներ գնդապետ Մ.Զինկևիչը՝ զեկուցագրում շեշտելով, թե

---

[23] ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.39, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.34.
[24] Տե՛ս ГА РФ, ф.446, оп.1, д.9, л.33:
[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.50:
[26] ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.50-51:

«...ռուսները այդպիսի բուռն մասնակցություն են ունենում հայ-վրացական հակամարտությանը: Ռուսները այդ միջադեպում օգնեցին հայերին, սակայն նրանք Ռուսաստանին ծառայություն չեն մատուցում»: Իրողությունն այն է, որ հայ-վրացական պատերազմում Կամավորական բանակը գործնականում չկարողացավ շոշափելի օգնություն ցուցաբերել Հայաստանին, այլ փորձում էր միջադեպն օգտագործել իր ռազմավարության իրագործման համար: Իսկ հայկական իշխանությունները ձախողեցին այդ փորձը: Գնդապետ Մ.Զինկևիչին հայտնի էր, որ 1918թ. դեկտեմբեր 21-ին գեներալ Մ.Արեշևը Թիֆլիսից գրավոր դիմել էր Կամավորական բանակին՝ օգնելու Լոռու և Ախալքալաքի հայկական տարածքներից դուրս բերելու վրացական զորքը[27]: Սակայն գեներալ Մ.Արեշևի խնդրանքը որևէ արդյունք չունեցավ: Գեներալ Ա.Դրագոմիրովի հանձնարարությամբ «Հատուկ խորհրդակցության» դիվանագիտական բաժինը դեկտեմբերի 30-ին քննարկեց «... թե ինչ կարելի է անել հայերի վիճակը թեթևացնելու համար»[28], սակայն հաջորդ օրը՝ դեկտեմբերի 31-ի գիշերը ստորագրվեց զինադադարը:

Այդուհանդերձ, հայ-վրացական պատերազմի ընթացքում Հայաստանի կառավարությունը, խուսափելով Կամավորական բանակի հետ քաղաքական շփումներից, չէր ձգտում կապերը խզել նրանից, այլ փորձում էր նրա հետ հարաբերությունները կարգավորել բացառապես տնտեսական, առևտրական և այլ ոլորտներում: Փորձում էր արտաքին աշխարհից կտրված Հայաստանին հացահատիկ, սննդամթերք, զենք ու զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրել: Գնդապետ Մ.Զինկևիչին հայտնի էր նաև, որ այդ ընթացքում Հայաստանի իշխանությունները երկրում տիրող սովը մեղմելու, հայկական բանակին պարենով ու զինամթերքով ապահովելու նպատակով դիմել էր Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը»: 1918թ. դեկտեմբերի 12-ին Կամավորական բանակի Գերագույն գլխավոր հրամանատարին ուղղված զեկույցում փոխգնդապետ Վլասևը գրում է. «...Ներկա պահին ռազմական գործողություններ են ընթանում Հայաստանի և Վրաստանի միջև և հայկական բանակին խիստ անհրաժեշտ է մատակարարել 100000 փութ հացահատիկ: Խնդրում եմ Ձեր թույլտվությունը»[29]: Դեկտեմբերի 14-ին փոխգնդապետ Վլասևին ուղղված գաղտնի պատասխան նամակում Կամավորական բանակի գլխավոր շտաբի քաղաքական գրասենյակի պետ՝ գնդապետ Չայկովսկին պատասխանեց, որ «Գերագույն գլխավոր հրամանատարը թույլատրել է հայկական բանակին մատակարարել 100 հազար փութ

---

[27] Տե՛ս ГА РФ, ф.446, оп.2, д.33, л.91:
[28] ГА РФ, ф.446, оп.2, д.33, л.91.
[29] ГА РФ, ф.446, оп.2, д.33, л.41.

հացահատիկ՝ ուղարկելով Նովոռոսիյսկ-Բաթում-Երևան երթուղիով»[30]: Նույն օրը՝ դեկտեմբերի 14-ին, գեներալ Ա.Դենիկինին[31], Կուբանի երկրամասի նախագահին[32], Եկատերինոդարի Հայոց ազգային խորհրդին[33] և փոխգնդապետ Վլասևին[34] ուղղված նամակներում ներկայացնելով հանրապետության սոցիալական աղետալի վիճակը՝ Ա.Ջամալյանը գրում է. «...Խնդրում ենք Ձեր աջակցությունը Հայաստանի զինվորական շտաբի ներկայացուցիչ գնդապետ Վլասևին, որի մոտ ես գործակալներ եմ ուղարկել Կուբանի մարզում սննդամթերք ձեռք բերելու համար: Նրանք պետք է Թիֆլիս բերեն 3000 փութ ալյուր, 50 փութ կենդանական և 100 փութ բուսական յուղ, որոնք Վրաստանի կառավարությունը առաքելության միջնորդությամբ խոստացել է ազատել մաքսավճարներից»[35]: Չնայած գեներալ Ա.Դենեկինի հրամանով փակվել էր ռուս-վրացական սահմանը Կամավորական բանակի և Վրաստանի միջև Սոչիի և Սուխումի երկրամասերի համար ծավալված պայքարի հետևանքով, սակայն գեներալը թույլատրել էր Հայաստան ապրանքներ առաքել[36]: Սակայն Երևան ուղարկվող բեռները շատ հաճախ ռուս-վրացական սահմանից վերադարձվում էր կրկին Կուբան կամ վրացական սահմանում թալանվում ու առգրավվում են, և միայն նրա շատ չնչին մասն էր տեղ հասնում: Այդ օրերին վրացական սահմանի վրա թալանվեցին նաև Ուկրաինայից Երևան ուղարկվող բեռները[37]:

Այսպիսով, արխիվային վավերագրերը բերում են այն համոզման, որ Հայաստանի կառավարությունը հայ-վրացական պատերազմի ընթացքում դրսևորեց քաղաքական ճկունություն: Նա փորձում էր օգտագործել դիվանագիտական բոլոր հնարքները՝ խուսափելու Կամավորական բանակի հետ քաղաքական շփումներից, որովհետև այն կարող էր ունենալ ծանր հետևանքներ ոչ միայն հանրապետության, այլ նաև հարևանների համար: Կամավորական բանակը ձգտում էր պատերազմի առիթը օգտագործել իր ազդեցությունը տարածաշրջանում հաստատելու համար:

---

[30] ГА РФ, ф.446, оп.2, д.33, л.40.
[31] ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.61, թ.46:
[32] ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.61, թ.47:
[33] ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.61, թ.49:
[34] ՀԱԱ, ֆ.Պ-201, g.1, գ.61, թ.48:
[35] ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.61, թ.46:
[36] Տես՝ ГА Рф, ф. 446, оп. 2, д. 39, л. 61-62, оп. 1, д. 19, л. 28, ф. 5829, оп. 1, д. 7, л. 28, Россия Антибольшевистская из белогвардейских и эмигрантских архивов, М., 1995, էջ 281 :
[37] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.231, թ.7: